Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Ս. Տեր Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 8 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիքգյուղի դպրոցի նախագծում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի երկրորդ գոտու ջրացանցի կառուցում» ծրագրերը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվող ծրագրի մասին, որի նպատակն է գույքային իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավունքների պետական գրանցման արդյունավետ և թափանցիկ համակարգի ստեղծում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վազգեն Առաջին կաթողիկոսի արձանի պատվանդանի կառուցման», «Ոռոգման ցանցի կառուցման» և «Գանձարանի տանիքի վերանորոգման» ծրագրերը:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի Հալիձոր թաղամասում և Ագարակ քաղաքի միջնակարգ դպրոցում թեքահարթակների կառուցում» և «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մաստար համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում» ծրագրերը:

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Վերանորոգում Հայկական Կարիտասի «Արեգակ» հաշմանդամ երեխաների կենտրոնում» ծրագիրը:

Նիստում քննարկվել եւ հաստատվել են նաեւ նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ եւ տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: